

ԳՐԻԳՈՐ ԱՆԱՎԱՐՁԵՑՈՒ «ԱՄԵՆԱՅՆ ՍՐՔՈՑ» ԿԱՆՈՆԸ

Գ. Ա. ՄԱՆՈՅԱՆ

Գրիգոր Անավարզեցու (1293—1307) այս ստեղծագործությունը մեծածավալ է: Այի-շանն իր ցուցակում «Ամենայն սրբոց» կանոնի մասին ասում է. «Ամենայն Սրբոց, այ-բուրբենական, վերջին երեք տունքն անորեալ են ս. Անարծաթեցն. քանզի առ Լատինս ի մինն ատուր (1 նոյեմբեր) կատարի սո՞ն Ամենայն Սրբոց և սոցա առանձինն»¹: Այժմ մենք հնարավորություն ունենք տեսնելու Այիշանի խոսքերի ճշտությունը. կանոնը հասել է մինչև մեր օրերը և տպագրված է²: Իսկապես, ըստ հերթականության, Անավարզեցին այ-բուրբենի բոլոր տառերով մեկական տուն է նվիրել սրբերին, այսինքն 36 տուն՝ Այբ-ից Քէ: Բայց ևս մեկ տուն կա՝ եզրափակող, որ մի գողտրիկ հանելուկ ունի: Այս մասին ոչինչ չի ասել Այիշանը, իսկ Ամատունին միայն կրկնել է նրա խոսքերը: Եվ հիմա տողատելով վերջին տունը, առաջին տառերով կարող ենք կարդալ Անավարզեցու մեկ այլ բանակապ.

Հաղորդ սրբոց

Եւ մեր օրհաներք,

Քազակցելոցն ընդ քեզ շնորհօք վայելեմք,

Որ զխոստովանողսն քոյ զԿազմաս և զԴամիանոս

Ի իծեալ կրկին բժշկութեան աղբիւր ի յերկրի.

Մաղթանօք սոցա՝ զանձինս մեր բժշկեա (Մանկունք, 8):

Սովորաբար եզրակապ կազմող տառը գրիչներն աչքի ընկնող էին դարձնում, քայց այս տան բանակապն ընդգծված չի եղել Ամատունու օգտագործած աղբյուրում, դա քացահայտ է, որովհետև Ամատունին տեղյակ չէ, թե գործ ունի ակրոստիքոսի հետ: Տառերն ընդգծված չեն նաև Լվովի Վլ. Ստեֆանեկի անվան գրադարանի Եր—8 (Փ. 49) ձեռագրում (այսուհետ շարադրանքի մեջ Լ), ուր կանոնը նույնպես արտագրված է (էջ 119—130): Համոզվելու համար, որ տունը բանակապով է, մանրամասն քննարկենք: Բանակապի առաջին տառը (Հ), ապացուցման կարիք չունի, քանզի տան առաջին տանն է: Վերջին տառի հարցում (Մ) ևս կարող ենք համոզված լինել, որովհետև այդ կրկնակը նույնն է և նախորդ տներում (=Մանկունք, 1, 2): Մնացյալ չորս տողերը համապատասխանաբար նկատվում են մտքերի ավարտներով և նոր մտքի սկիզբ են հանդիսանում: Հատկանշական է «իւսեսայ» բառի կիրառությունը, որ սովորաբար միայն բանակապերի ժամանակ է ի հայտ գալիս: Հաշվի առնելով վերը ասվածը՝ կարող ենք ընդունել, որ, իրոք, բանակապ կա, և այն հյուսում է Անավարզեցու բանակապերում հաճախ հանդիպող ՀԵԹՈՒՄ անունը:

Անդրադառնաք Այիշանի մյուս մտքին. վերջին երեք տները, Մանկունք-ն ամբողջությամբ, նվիրված են Անարծաթ բժշկներին: Ինչպես վերևում բերված տունը, նույնպես և այս մեկը, հաստատում են Այիշանի միտքը.

Քեզ ճշմարտին վարդապետի

Հաղորդ անուան գործս և Բան մարդաւերջ

Գթով անհինչք շրջեալք յաշխարհի

Բժիշկքն ձրի՝ Դամիանոս ընդ Կոզմայի (Մճկ, 2):

Բայց բացի Մանկունք-ից, Դամիանոսի և Կոզմայի անուններին հանդիպում ենք նաև Ողորմես-յի չորրորդ տան մեջ.

¹ Ղ. Այիշան, Սիսուան և Լևոն Մեծագործ, Վեներտիկ, 1885, էջ 241:

² Ս. Ամատունի, Հին և նոր պարսկանոն կամ անվաւեր շարականներ, Վաղարշապատ, 1911, էջ 145—149:

**Ռամից հանուրց են հրաշալի,
Որք ձրի առեայք և ետուն ձրի,
Սուրբ Անարծաթքն սքանչելի՝
Դամիանոս ընդ Կոզմայի:**

Ինչպես գիտենք, Կոզման և Դամիանոս եղբայրներ էին և Աստծու զորությամբ բժըշկում էին անբուժելի թվացող հիվանդներին: Իրենց գործերի դիմաց Կոզման և Դամիանոսը երբեք վարձ չէին վերցնում, և այդ պատճառով կոչվեցին Անարծաթ բժիշկներ³: Լատին նկեղեցին հրանց և բոլոր սրբերի տոնը նշում է նույնների 1-ին: Այդ գաղափարը կա նաև Լ ձեռագրում, որը կաթոլիկ հայերն են օգտագործել: Նույններ Ա և Սահմի ԻԳ է գրանցված նրանց տոնը Գրիգոր Անավարզեցու խմբագրած «Յայսմատուրք»-ում⁴: Սակայն Կոզմասի և Դամիանոսի մասին պատմությունը կա նաև, ասենք՝ Գրիգոր Նյաթեցու «Յայսմատուրք»-ում⁵: Այդ սրբերին հայ եկեղեցին նույնպես ընդունում է, ուղղակի տոնակատարությունն ուրիշ օր է լինում⁶: «Յայսմատուրք»-ներից քաղում ենք մեկ այլ կարևոր հանգամանք ևս՝ Կոզմասը և Դամիանոսը Անարծաթ բժիշկների միակ զույգը չեն: Եղել են նույնանուն բժիշկներ, որ նմանաբար անվանվել են Անարծաթներ⁷: Պետք է կարծել, թե Ռդորմեայի չորրորդ տունը հենց նրանց է ձևավորված: Փաստորեն այդ միտքն է հաղորդում Ալիշանը, երբ ասում է. «վերջին երեք տունքն նույնպես են Ս. Անարծաթիցն», իսկ եթե եղենք միայն Ռդորմեայի չորրորդ տնից, անհնար է պարզելը, թե ո՞ր եղբայրների մասին է խոսքը հատկապես:

Կարդալով «Ամենայն սրբոց» կանոնը՝ զգում ենք, որ Անավարզեցին խիշիալոց չի բխարկում սրբերին, այլ դասակարգված և խիստ հերթականությամբ: Բնականաբար առաջին տունը պիտի նվիրված լիներ Արարչին՝ Հայր Աստծուն.

**Անճառ խորոց քոց գիտութեամբ,
Հա՛յր, հիմն արկեր իմաստութեամբ
Աստուածայնոյ քոյ տաճարի
Կոչս ժոր, Որդոյ քոյ և ծնողի,
Ջնահապետաց սուրբ ընտրութիւն
Եւ զնախահարցն արդարութիւն,
Ջոր շինեցեր զուշակութեամբ
Մարգարէից բանին լրմամբ:
(Օրհնութիւն, աչտուհետև՝ Օհ, 1):**

Ապա հետևում է Որդի Աստծուն նվիրված տուն: Երրորդ տունն արդեն սուրբ Հոգուն է փառաբանում: Դրանից հետո Անավարզեցին զովերզում է ս. Երրորդությունը և Հայր Աստծուն: Նախապատրաստելով իր խոսքը սրբերի մասին՝ առաքյալներից, անապատականներին, այլ և այլ մարտիրոսներին հիշելուց առաջ, Անավարզեցին շեշտում է, որ նրանց ուժ, հավատ և զորություն տվողը հատկապես ս. Երրորդությունն է: Եվ այս ամենը հեղինակը երգում է հմայիչ պատկերների միջոցով.

**Դաւանեալոյ Երրորդութիւն,
Պաշտեալ լից աստուածութիւն,
Քև ճզնատքն իրախուսեալ,
Միայն ընդ քեզ տաճնճագեալ,
Պարկեշտ, մաքուր հուլքն կուսից
Քոց հարսնացեալ ճառագայթից... (Օհ, 4):**

Ներկա տանը տրամաբանորեն պետք է հետևեր Աստվածածնի փառաբանությունը, և դա նկատելի կլիներ, եթե աղճատումներ չլինեին: Համաձայն Լ ձեռագրի, այս տունը ուղղված է Հայր Աստծուն՝ «Հայր հաստողի հանին գերկին» (Օհ, 6): Չնայած քաղում օգտակար ուղղումներին՝ Ամատունու տարբերակը ամբողջովին պարզություն չի մտցնում.

**Ջքեզ ամենայն սուրբքն երանեն,
Փարրիլիւ հրեշտակօք զովեն,**

³ «Յայսմատուրք» (խմբ. Գրիգոր Անավարզեցի), Կոստանդնուպոլիս, 1834, գիրք Բ, էջ 217:

⁴ Նույն տեղում:

⁵ «Յայսմատուրք» (ըստ Գր. Նյաթ.), Կ. Պոլիս, 1730, էջ ԴԾԻԶ:

⁶ Նույն տեղում:

⁷ «Յայսմատուրք» (Գր. Անավ.), Կ. Պոլիս, 1834, էջ 219:

**Մայր հաստողի Բանին գերկին,
Ջոր ծնար Փրկիչ երկրի մարմին,
Հաղորդ ստորինս եկեղեցի
Եկեղեցույ մեծ, որ յերկնի
Զխառնարանդ ի մի օրհնեմք,
Բարեխօսել միշտ աղերսեմք:**

«Խառնարանն օրհնելը» և «բարեխոսելու աղերսը» պետք է ուղղված լինեն Աստվածածնին՝ Աստված ինքը բարեխոսելու կարիք չունի, որը հաստատում է 8-րդ տողի (Մայր հաստողի Բանին գերկին) «մայր» բառի ճշտությունը, այսինքն՝ երկինքը հաստատող Բանն մայր (նման մտքեր հանդիպում ենք մեկնական գրականության մեջ)⁸:

Եվ երբ համոզվում ենք, որ տունը Աստվածածնին ուղղված աղաչանք է, անհասկանալի է դառնում 8-րդ տողը՝ Եկեղեցույ մեծ, որ յերկնի: Մյուս է անճշտությունը տողատման մեջ որոնելը՝ քննարկվող տան բոլոր տողերը հանգավոր են. ինչով հաստատվում է տողատման ստույգությունը: Ու, չնայած թե՛ Լ ձեռագիրը, թե՛ Ամատունու տարբերակը տալիս են «եկեղեցույդ» ձևը, հավանաբար, ստացական դ հողը պետք է հանենք, քանզի երկնային եկեղեցին Աստվածածնինը չէ, այլ Տիրոջ Եկեղեցին է:

Այսպիսով 8-րդ տունը ձոնված է Մարիամին և, ըստ Անավարզեցու սովորության, այն պետք է ազդարարեր Օրհնությանն ավարտը: Բայց այս տունը, ի տարբերություն մյուսների, որ ազդարարում են որևէ երգի ավարտը, ուրիշ նպատակով է ստեղծված: Ինչպես ասել ենք վերևում, այն պատահաբար չէ հաջորդում Հորը, Որդուն և ս. Հոգուն փառաբանող տներին, տրամաբանորեն շարունակելով պաշտամունքի գլխավոր առարկաների փվարկումը, և հեղինակն անդրադառնում է Աստծու սպասավորներին.

**Էակից Հօր սպասաւորք,
Հուպ Անհասին և մերձաւորք՝
Աւարչելոց գունդք երանելաք,
Եւ աշակերտք Բանին ընտրեալք (ՕՌ, 7):**

Լիովին հասկանալի շարունակություն՝ Աստվածածնից հետո Որդի Աստծուն «հուպ և մերձաւոր» էին առաքյալները, ապա՝ 72 աշակերտները: Նման խիստ դասակարգման Անավարզեցին տուն առ տուն հիշում է. «մարգարէից պար գովելի» (ՕՌ, 8), «մարտիրոսք, որք խաչեալք» (9), «սուրբք ճգնաւորքն՝ հարք ի շնորհէ» (10)՝ անելով հետաքրքիր համեմատություններ և գովաբանելով երկրային հաճույքներից վեր կանգնածների՞ն.

**Հրեշտակացեալք ի մարդկանէ
Կոյսք իմաստունք, որք վեճ արուաց
Ի կանացի բնութիւն իգաց (ՕՌ, 10):**

ՕՌ. շարականում հիշված են նաև «ամենայն մարտիրոսները», որոնց, չնայած վերջի տեղում է հիշում հեղինակը, սակայն, նույնպես փառաբանում է գերագույն աստիճանի շեշտելով ամենակարևորը՝ նրանք իրենց որդիների ու դուստրերի հետ վայելում են երկնային արքայությունը:

Եվ անպայման երզը պիտի եզրափակվեր Տիրամորն ուղղված ջերմ խոսքերով, իսկ փվարկումը, սկսվելով Հայր Աստծուց՝ ավարտվեր «ամենայնի մօր» քարձրարարմամբ.

**Լոյսն ծագող անճառապէս,
Արդարութիւն մեր մաքրապէս,
Կեանք՝ անուանեալ Աղբիւր կեանց,
Մայր ամենից այս կենդանեաց,
Լուծիչ մահու պարտեաց նախկին,
Կոյս Մարիամ Աստուածածին (ՕՌ, 12):**

Այսբանով ՕՌ. շարականը ավարտվում է: Ամատունու գրքում հետևում է միայն Գ՛ գրանցումը: Լ ձեռագրի մեջ այս երզը ներկայացված է որպես Գործատուն (Գ) Անավարզեցու գրած, ինչպես և Գ-երի մեծ մասը հեշտությանը տարբերվում է բոլոր մյուս երգերից: Օրինակ նույն կանոնում եղած մյուս Գ-ն անհնար է շփոթել որևէ այլ կարգի հետ. այն աչքի է ընկնում իր կրկնակով.

**Նոր հերթանուաց փրկեալք զգին Միանի,
Բոլոր սրբոց մի եկեղեցի,
ԸզՏէր օրհնեցէք, քարձր արարէք զմա յախտեան (Գ, Բ. 2, 1 ա):**

⁸ Հմմտ. «Նոր քառգիրք հայկազեան լեզուի», Բ. Ա, Երևան, 1979, ԲԱՆ հոդվածը:

**Խորհրդական խորան քառութեան
Զմայր Միածնիդ յայտնեցեր մարդկան
Որպէս տաճարին զարրութիւն սրբոց
Յուցեր զճա սուրբ ամենայն սրբոց (Գ, հ. 1, 1 տուն):**

Հետաքրքիր է, որ համար 1 Գ-ը նմանվում է Օհ-ին. Ինչպես Օհ-ում, նույնպես և այստեղ, շարականը սկսվում է Հայր Աստծու փառաբանությամբ, որին հետևում են Որդուն, և Հոգուն և Երրորդությանն ուղղված տներ, ուր խոսվում է նաև թե ինչ կերպով զանազան սրբերը քրիստոնեությունը քարոզեցին: Ամեն ոք իր ուրույն մասնակցությունն է բերել այդ գործին՝ «ճգնավորները նեղությամբ», «կույսերը զգաստությամբ» հաստատագրվեցին իրենց հավատին, իսկ «ս. հայերը» և «վկաները».

**Հարքն բանի, և վկայից հանդէսն մահաւոր
Քարոզեցին զքեզ Երրորդութիւն՝
Երիս անձինս ի բնութեան, անբառ միութիւն (Գ, հ. 1, 4 տ):**

Նախորդների նման, այս երգը ևս ավարտվում է ս. Կույսին մեծարող տնով (տուն 6): Համեմատաբար փոքր է Հց. շարականը, որ բաղկացած է ընդամենը 3 տնից՝ համապատասխանաբար Հորը, Որդուն և ս. Հոգուն նվիրված: Նույնաբար 3 տնից կազմված 2-րդ Գործատանը հաջորդում է Ող. շարականը՝ Միածնի երկրպագությունը.

**Չարչարանօք ընտրեալքն քոյ,
Մաքրեալք որպէս ի բով ոսկւոյ,
Բազում անդամք մի մարմնայ՝
Յօդեալք ի փառս Միոյդ զիւրոյ.
Բարեխօսութեամբ սոցա՝ ռդորմեա՝ մեզ, Որդի Աստուծոյ (1):**

Կարդալով Անավարզեցու 700-ամյա շարականները՝ հանդիպում ենք քրիստոնեական գաղափարախոսության մեջ տեղ գտած բազում խստաբարո պահանջների, որ, անշուշտ, այսօր դաժան են հնչում: Ահա Տէր. յերկնից շարականում Անավարզեցին փառաբանում է երկնային արքայության արժանացածներին, բայց ուշադրություն է գրավում նրանց անցած ճանապարհը դեպի հավերժություն.

**Իւծեալք զկեանս հալածմամբ
Եւ հանգչին արքայութեամբ (Տէր յերկնից— Ց. յ. 6):**

«Ամենայն սրբոց» կանոնը հանգավոր և չափական ստեղծագործություն է: Ծարականների չափականության մասին կարելի է ասել, որ ավել վանկեր ունեցող տողերից, երգվելիս բաց էին թողնվում ձայնավորները կամ ավելացվում հարկ եղած դեպքում: Բայց հակառակ սրան անհանգությունը ոչ մի կերպ թարքնել չի լինի: Թե՛ չափի, թե՛ հանգի տեսակետից Անավարզեցու գործերի մեծ մասը գրեթե անթերի է, մինչդեռ այս կանոնում երբեմն հանդիպում են հանգաստեղծման թույլ օրինակներ.

**Որպէս տաճարին զարրութիւն սրբոց
Յուցեր զճա սուրբ ամենայն սրբոց (Գ. հ. 1, տուն 1):**

Անշուշտ նույն բառի կրկնությունը հանգ ստեղծելու ամենահեշտ, բայցև ամենահասարակ ձևն է: Սակայն, նման օրինակներով չի կարելի պատկերացում կազմել Անավարզեցու մասին, որ, թերևս, հանգի մեծ վարպետ է: Հիշենք նրա սովորությունը՝ արձակ խոսքում հանգավոր բառերի կրկնություն կամ արմատների կրկնություն: Կանոնում այդպիսի դեպքեր ևս կան. «պարագլխոյդ պար քոլորեալք» (Ող. 2), «զհանգին ուսկան ի բազմապատիկ տան» (Հարց. 2) և այլն: Անավարզեցու ստեղծածը փաստորեն, կրկնակի հանգի հեռավոր շորշուփն է: Որպես հանգի մեծագույն վարպետ, Անավարզեցին մի հայտնագործություն է արել: Հեղինակը հանգերով համապատասխանեցնում է ոչ միայն տողերի վերջին բառերի վերջավորությունները, այլ նաև նախավերջին բառերինը: Առաջին հայացքից դա թույլ ընդգծված երևույթ է, որ կարող է պատահականություն համարվել.

**Մզնաւորաց հոյքն նեղութեամբ,
Եւ սուրբ կուսանաց խումբն զգաստութեամբ (Գ. հ. 1, 5):**

Կամ.

**Ղեկավարեալ Ոգոյն զարրութեամբ
Տաղան աշխարհի կրկին նորոգման (Գ. հ. 1, 6):**

Այլ օրինակ.

**Ռամից հանուրց եմ հրաշալի
Որք ձրի առան և ետուն ձրի՝
Սուրբ Անարծաթքն սքանչելի (Ող. 4):**

Ստիպված ենք բերել այլևայլ օրինակներ ևս, մատնանշելու համար, որ նախավերջին բառերի վերջին տառերը պատահականության արդյունք չեն.

**Պայծառ բանին պտղալի
Եւ վկայից խառն երամի
Փթթեալ արեամբն ծաղկալի (Օհ. 8):
Վասն բանին վկայք զինեալք
Եւ մարտիրոսք, որք խաչեալք (Օհ. 9):**

Վերևում բերեցինք նույն բառի կրկնությանը հանգավորելու օրինակ, նմանատիպ դեպքերը նախավերջին բառերի հետ կապված, թերևս, հաստատում են Անավարզեցու քայլերի ոչ պատահական, նպատակամղված լինելը.

**Ջերօք ծննդօք զորս երկնեցիք
Պտղօք բարեաց զորս տնկեցիք (Օհ. 7)
Անճառ զրազում վարձս ընդ կալեալք
Յօղեալ բոլորդ ընդ մասունս (Տ. յ. 6):
Աստուածայնոյ քոյ տաճարի
Կոյս մօր Որդոյ քոյ և ծնօղի (Օհ. 1):**

Եվ, վերջապես, օրինակներ, որ ամբողջովին վերացնում են կասկածները.

**Ջեօք օրհնութիւն ազբիրացաւ,
Ուխտի բնութիւնս արժանացաւ (Օհ. 8):
Ազաւմացեալք երամովին
Եւ ձագախառն եղեալ յերկին (Օհ. 11):
Ծնորհիւ դասակցեալք ոգիք հրեշտակաց զնդին
Ժողովք սրբոց անդրաճկաց յերկին (Գ. հ. 2, 2 տուն):
Ժուժկալութեամբ զմարմին սպանեալք,
Յայրս և ի ծերպս երկնի ճգնեալք՝
Սուրբք ճգնատրքն, հարք ի շնորհէ,
Հրեշտակացեալք ի մարդկանէ (Օհ. 10):**

Այսպիսով համոզվում ենք, որ երևույթը պատահականության արդյունք չէ և, հաշվի նստելով այս հանգամանքի հետ, նորից կարողանք տունը, ուր հեղինակը միայն վերջին և նախավերջին բառերը չի հարմարեցրել, այլ նաև.

**Ջերօք ծննդօք զորս երկնեցիք,
Պտղօք բարեաց զորս տնկեցիք,
Այսօր բոլոր սրբօք մաղթել...
Մատիք առ Տէր բարեխօսել:**

Անավարզեցին նման միջոցների հաճախ է դիմում, որ, գուցե, կարելի է հանգախաղ անվանել: Բայց պետք է նշել, որ այսպես հեղինակն իրեն կամովին սահմանափակում է, և դրանից, անկասկած, երգերը տուժում են բանաստեղծական տեսանկյունից:

Г. А. МАДОЯН — Канон «Всех святых» Григора Анавардзечи.— Автор обращается к произведению одного из крупнейших духовных и культурных деятелей Киликийской Армении — Григора Анавардзечи (1293—1307 гг.). В статье впервые подробно анализируется его канон, выдвигаются и объясняются связанные с ним ряд проблем.